

«ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՍԵՆԵՋՍԵՆԹ» ՓԲԸ

Ֆինանսական հաշվետվություններ

2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

Բովանդակություն

Անկախ աուդիտորական եզրակացություն	3
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	5
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն	6
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն	7
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն	8
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ.....	9



KPMG Armenia cjsc
 8th floor, Erebuni Plaza Business Center,
 26/1 Vazgen Sargsyan Street
 Yerevan 0010, Armenia

Ջեյ-Փի-էմ-Ջի Արմենիա ՓԲԸ
 ԳԳ, Երևան, 0010
 Վ.Սարգսյանի փ. 26/1,
 «Էրեբունի Պլազա» Բիզնես-կենտրոն,
 8-րդ հարկ

Telephone Դեռայտս + 374 (10) 566 762
 Fax Ֆաքս + 374 (10) 566 762
 Internet Ինտերնետ www.kpmg.am

Անկախ աուդիտորական եզրակացություն

«ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ
Տնօրենների խորհրդին

Մենք իրականացրել ենք «ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ-ի («Ընկերություն») կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, հաշվետու տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները և այլ բացատրական տեղեկատվություն:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն այս ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Ղեկավարությունը պատասխանատու է նաև այնպիսի ներքին վերահսկողության համակարգի համար, որը, ղեկավարության կարծիքով, թույլ կտա կազմել սխալների կամ խարդախության արդյունքում առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվություններ:

Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է անցկացված աուդիտի արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Մենք աուդիտն անցկացրեցինք Աուդիտի միջազգային ստանդարտներին համապատասխան: Այդ ստանդարտներով պահանջվում է, որ մենք հետևենք էթիկայի պահանջներին և աուդիտը պլանավորենք ու իրականացնենք՝ ֆինանսական հաշվետվություններն էական խեղաթյուրումներից զերծ լինելու մասին ողջամիտ երաշխիք ձեռք բերելու նպատակով:

Աուդիտորական աշխատանքները ներառում են այնպիսի ընթացակարգերի իրականացում, որոնք թույլ են տալիս ձեռք բերել աուդիտորական ապացույցներ ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ: Ընտրված ընթացակարգերը կախված են աուդիտորի դատողությունից, ներառյալ խարդախությամբ կամ սխալներով պայմանավորված ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումների ռիսկի գնահատումը: Այս ռիսկը գնահատելիս աուդիտորը դիտարկում է ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ կերպով ներկայացման համար կիրառվող ներքին վերահսկողության համակարգը՝ նպատակ ունենալով մշակել համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ կարծիք արտահայտել կազմակերպության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ: Աուդիտորական աշխատանքները ներառում են նաև ֆինանսական հաշվետվությունների կազմման ժամանակ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության համապատասխանության, ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների նպատակահարմարության, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացման գնահատումը:

Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավականաչափ են և համապատասխան՝ մեր աուդիտորական եզրակացության հիմք հանդիսանալու համար:

Եզրակացություն

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև վերջինիս գործունեության արդյունքներն ու դրամական միջոցների հոսքերը հաշվետու տարվա համար՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն:

Այլ նշում

Ընկերության 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացվել է այլ աուդիտորական կազմակերպության կողմից, որի 2015թ. ապրիլի 27-ի եզրակացությունում արտահայտվել է չձևափոխված կարծիք նշված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Տիգրան Գաբրիելյան
Ղեկավար գործունեի «Բեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ-ի տնօրեն



«Բեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՓԲԸ
19 ապրիլի 2016թ.

«ԱՄՈՒՆԴԻ-ԱՎԲԱ ԱՍԵՏ ՄԵՆԵՋՄԵՆՏ» ՓԲԸ
 Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն
 2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	ԾՆՔԳ.	2015թ. հազ. դրամ	2014թ. հազ. դրամ
Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտ	4	217,475	117,079
Տոկոսային եկամուտ		28,828	38,411
Ընդամենը հասույթ		246,303	155,490
Ջուտ (վնաս)/օգուտ արտարժույթով գործառնություններից		(8,848)	4,759
Աշխատակազմի գծով ծախսեր	5	(174,520)	(169,192)
Այլ ծախսեր	6	(148,137)	(103,791)
Վնաս նախքան շահութահարկով հարկումը		(85,202)	(112,734)
Շահութահարկի գծով ծախս	7	-	-
Վնաս տարվա համար		(85,202)	(112,734)
Այլ համապարփակ եկամուտ			
<i>Հողվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս</i>			
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստ			
- Իրական արժեքի գուտ փոփոխություն		15,971	1,891
Ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար		(69,231)	(110,843)

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2016թ. ապրիլի 19-ին և ստորագրվել են վերջինիս անունից:





Ֆիլիպ Ռուտ
Գործադիր տնօրեն

Արամ Աբրահամյան
Գլխավոր հաշվապահի
Մամանակավոր պաշտոնակատար

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

«ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՄԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ
 Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Ծնթգ.	2015թ. հազ. դրամ	2014թ. հազ. դրամ
ԱԿՏԻՎՆԵՐ			
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	8	95,956	102,907
Պահանջներ բանկերի նկատմամբ	9	151,435	204,338
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	10	287,862	221,891
Հիմնական միջոցներ	11	42,851	54,834
Այլ ակտիվներ	12	42,744	116,414
Ընդամենը ակտիվներ		620,848	700,384
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ			
Այլ պարտավորություններ		12,570	22,875
Ընդամենը պարտավորություններ		12,570	22,875
ՄԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ			
Բաժնետիրական կապիտալ	13	800,000	800,000
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստ		17,862	1,891
Կուտակված վնաս		(209,584)	(124,382)
Ընդամենը սեփական կապիտալ		608,278	677,509
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ		620,848	700,384

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

«ԱՄՈՒՆԴԻ-ԱԿՐԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ
 Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
 2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

	2015թ. հազ. դրամ	2014թ. հազ. դրամ
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ		
Վնաս նախքան շահութահարկով հարկումը	(85,202)	(112,734)
<i>Ճշգրտումներ հետևյալ հոդվածների գծով.</i>		
Մաշվածություն	12,103	6,142
Տոկոսային եկամուտ	(28,828)	(38,411)
Արտարժույթի փոխարկում	8,448	(4,966)
	(93,479)	(149,969)
<i>Փոփոխություններ հետևյալ հոդվածների գծով.</i>		
Վաճառքի համար մատչելի ներդրումներ	(50,000)	(220,000)
Պահանջներ բանկերի նկատմամբ	50,000	(199,899)
Այլ ակտիվներ	65,915	(111,940)
Այլ պարտավորություններ	(9,585)	22,362
Գործառնական գործունեության համար օգտագործված դրամական միջոցների հոսքեր՝ նախքան տոկոսներ ստանալը	(37,149)	(659,446)
Ստացված տոկոսներ	31,731	33,972
Գործառնական գործունեության համար (օգտագործված) զուտ դրամական միջոցներ	(5,418)	(625,474)
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ		
Հիմնական միջոցների ձեռքբերում	(120)	(60,976)
Ներդրումային գործունեության համար օգտագործված դրամական միջոցների հոսքեր	(120)	(60,976)
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ նվազում	(5,538)	(686,450)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբի դրությամբ	102,907	788,720
Փոխանակման փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա	(1,413)	637
Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջի դրությամբ	95,956	102,907

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

«ԱՄՌԻՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ
 Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
 2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

հազ. դրամ	Բաժնետիրական կապիտալ	Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների վերագնահատման պահուստ	Կուտակված վնաս	Ընդամենը
Մնացորդը առ 1 հունվարի 2014թ.	800,000	-	(11,648)	788,352
Ընդամենը համապարփակ եկամուտ				
Վնաս տարվա համար	-	-	(112,734)	(112,734)
Այլ համապարփակ եկամուտ				
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի գուտ փոփոխություն	-	1,891	-	1,891
Ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար	-	1,891	(112,734)	(110,843)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2014թ.	800,000	1,891	(124,382)	677,509
Մնացորդը առ 1 հունվարի 2015թ.	800,000	1,891	(124,382)	677,509
Ընդամենը համապարփակ եկամուտ				
Վնաս տարվա համար	-	-	(85,202)	(85,202)
Այլ համապարփակ եկամուտ				
Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների իրական արժեքի գուտ փոփոխություն	-	15,971	-	15,971
Ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար	-	15,971	(85,202)	(69,231)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2015թ.	800,000	17,862	(209,584)	608,278

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է դիտարկվի ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը կազմող ծանոթագրությունների հետ մեկտեղ:

1 Ներածություն

(ա) Կազմակերպչական կառուցվածքը և հիմնական գործունեությունը

«ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ-ն («Ընկերություն») հիմնադրվել է 2013թ-ին և գործում է Հայաստանի Հանրապետության («ՀՀ») օրենսդրության պահանջներին համապատասխան: Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի («ՀՀ ԿԲ») կողմից տրված թիվ 0002 լիցենզիայի համաձայն՝ հանդես գալով որպես պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչ:

Կենսաթոշակներին վերաբերող հարցերը կարգավորող ՀՀ օրենսդրության համաձայն՝ կոնսաթոշակային ֆոնդեր կատարվող հատկացումները ներկայումս պարտադիր են աշխատակիցների որոշակի խմբի համար: 2014թ. հուլիսի 1-ից հատկացումները պարտադիր են դարձել 1974թ-ից հետո ծնված ՀՀ բոլոր աշխատակիցների համար:

Ընկերության գործունեությունը վերահսկվում է ՀՀ ԿԲ-ի կողմից:

Ընկերության հիմնական գործունեությունը պարտադիր կուտակային կենսաթոշակային ֆոնդերի կառավարումն է: Ընկերության կառավարման ներքո գտնվում են հետևյալ երեք ֆոնդերը.

- «ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ կայուն եկամտային կենսաթոշակային ֆոնդ,
- «ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ պահպանողական կենսաթոշակային ֆոնդ,
- «ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՋՄԵՆԹ» ՓԲԸ հավասարակշռված կենսաթոշակային ֆոնդ:

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան, Վ. Սարգսյանի փ. 10, տարածք 100-101:

Ընկերության բաժնետոմսերի 51%-ը պատկանում է Ամունդի Ասետ Մենեջմենթ Էս-Էյ-ին (Ֆրանսիա), իսկ 49%-ը՝ «ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈՒԼ ԲԱՆԿ» ՓԲԸ-ին: Ընկերության վերջնական մայր կազմակերպությունն է հանդիսանում Կրեդիտ Ագրիկոլ Էս-Էյ-ը (Ֆրանսիա):

(բ) Հայաստանի գործարար միջավայրը

Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանում: Հետևաբար, Ընկերության գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկան, որոնց բնորոշ են զարգացող շուկայի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն կարող են ունենալ տարբեր մեկնաբանություններ և ենթակա են հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական ու ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար: Ֆինանսական հաշվետվություններն արտացոլում են Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա գործարար միջավայրի ազդեցության ղեկավարության գնահատականը: Ապագա գործարար միջավայրը կարող է տարբերվել ղեկավարության գնահատականից:

2 Պատրաստման հիմունքներ

(ա) Համապատասխանության մասին հայտարարություն

Այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների («ՖՀՄՍ») պահանջների համաձայն:

(բ) Չափման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների, որոնք հաշվառված են իրական արժեքով:

(գ) Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Ընկերության ֆունկցիոնալ արժույթն է հանդիսանում ՀՀ դրանը («դրամ»), որը, լինելով Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը, արտացոլում է Ընկերության գործունեության հիմքում ընկած իրադարձությունների և հանգամանքների տնտեսական էությունը:

Դրանը հանդիսանում է նաև այս ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը:

Ֆինանսական տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

(դ) Գնահատումների և դատողությունների օգտագործում

Այս ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ի պահանջներին համապատասխան պատրաստելու համար դեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամուտների և ծախսերի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

Գնահատումներն ու համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որում վերանայվել են և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Հաջորդ տարվա ֆինանսական հաշվետվություններում էական ճշգրտման ռիսկ ենթադրող գնահատումների և ենթադրությունների հետ կապված անորոշությունների վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություն 7-ում՝ հաջորդ ժամանակաշրջան փոխանցված հարկային վնասի համար հետաձգված հարկային ակտիվների չճանաչելուն վերաբերող շահութահարկի գծով ծախսի հետ կապված:

Ընկերության հաշվապահական հաշվառման որոշակի դրույթների և բացահայտումների համար պահանջվում է իրական արժեքի չափում ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների համար:

Ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելիս՝ Ընկերությունը հնարավորության սահմաններում օգտագործում է դիտարկելի շուկայական տվյալները:

Իրական արժեքները դասակարգվում են ըստ իրական արժեքի հիերարխիայի մակարդակների՝ հիմք ընդունելով գնհատման մեթոդներում օգտագործված ելակետային տվյալները, ինչպես ներկայացված է ստորև.

- *1-ին մակարդակ.* նույն ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկաներում գնանշվող գներ (չճշգրտված):
- *2-րդ մակարդակ.* 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներ, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիորեն (այսինքն՝ որպես գներ) կամ անուղղակիորեն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող):
- *3-րդ մակարդակ.* ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկելի շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

Եթե ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելու համար օգտագործվող ելակետային տվյալները կարող են դասակարգվել իրական արժեքի հիերարխիայի տարբեր մակարդակների, ապա իրական արժեքի չափումն ամբողջությամբ դասվում է հիերարխիայի այն նույն մակարդակին, որին դասվում են այն ամենացածր մակարդակի ելակետային տվյալները, որոնք նշանակալի են ամբողջությամբ վերցված իրական արժեքի չափման համար:

Ընկերությունը ճանաչում է իրական արժեքի հիերարխիայի մակարդակների միջև իրականացվող փոխանցումներն այն հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ, որի ընթացքում տեղի է ունեցել փոփոխությունը:

Ամորտիզացված արժեքով չափվող բոլոր ֆինանսական գործիքների գնահատված իրական արժեքը մոտավորապես համապատասխանում է վերջիններիս հաշվեկշռային արժեքին:

Իրական արժեքի չափմանը վերաբերող լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացված է ծանոթագրություն 10-ում՝ «Վաճառքի համար մատչելի ներդրումներ»:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ստորև ներկայացվող հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հետևողականորեն կիրառվում է այս ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

(ա) Ֆոնդերի կառավարում

Ընկերությունը ներդրողների անունից կառավարում է ներդրումային ֆոնդերում պահվող ակտիվները: Այս կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունները ներառված չեն Ընկերության այս ֆինանսական հաշվետվություններում, քանի որ Ընկերությունը հանդես է գալիս որպես ներդրողների գործակալ ֆոնդերում:

(բ) Հասույթ

(i) Ֆոնդերի կառավարման վճարներ

Ֆոնդերի կռավարումից ստացվող հասույթը ճանաչվում է որպես վաստակված, հիմք ընդունելով հասույթի այն գումարը, որն Ընկերությունն իրավասու է ստանալ ժամանակաշրջանի համար: Ֆոնդերի կառավարման վճարները հաշվարկվում են կառավարվող ֆոնդերի գուտ ակտիվների արժեքի նկատմամբ կիրառվող վճարների պայմանագրային դրույքների հիման վրա:

(ii) Կոմիսիոն վճարներ

Կոմիսիոն վճարների տեսքով այլ հասույթը ճանաչվում է որպես վաստակված, հիմք ընդունելով հասույթի այն գումարը, որն Ընկերությունն իրավասու է ստանալ ժամանակաշրջանի համար, և ծառայությունների շահառուի հետ համաձայնեցված կոմիսիոն վճարի գումարը:

(iii) Տոկոսային եկամուտ

Տոկոսային եկամուտը ճանաչվում է կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

(գ) Արտարժույթ

Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են Ընկերության ֆունկցիոնալ արժույթին գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները վերափոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Դրամային հոդվածների գծով արտարժույթով իրականացված գործառնություններից առաջացած օգուտը կամ վնասն իրենից ներկայացնում է տարբերությունը ժամանակաշրջանի սկզբում ֆունկցիոնալ արժույթով արտահայտված, արդյունավետ տոկոսադրույքի ու ժամանակաշրջանի վճարումների ճշգրտումով ամորտիզացված արժեքի և հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ գործող փոխարժեքով փոխարկված ֆունկցիոնալ արժույթով արտահայտված ամորտիզացված արժեքի միջև: Արտարժույթով արտահայտված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները, որոնք չափվում են իրական արժեքով, վերափոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի իրական արժեքի որոշման ամսաթվի դրությամբ սահմանված փոխարժեքով: Սկզբնական արժեքով չափվող, արտարժույթով արտահայտված ոչ դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Վերափոխարկման արդյունքում առաջացող արտարժույթային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ վաճառքի համար մատչելի բաժնային գործիքների վերափոխարկման արդյունքում առաջացող տարբերությունների կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում ճանաչված դրամական միջոցների հոսքերի հեջավորման պահանջներին համապատասխանող տարբերությունների:

(դ) Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ են համարվում կանխիկ թղթադրամները և մետաղադրամները, այլ բանկերում պահվող սահմանափակումներ չունեցող մնացորդները (ընթացիկ հաշիվներ), բանկերում պահվող ժամկետային ավանդները մինչև կամ երեք ամիս նախնական ժամկետայնությամբ: Դրամական միջոցները և դրանց համարժեքները հաշվառվում ենք ամորտիզացված արժեքով՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

(ե) Ֆինանսական գործիքներ

(i) Դասակարգում

Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքները իրենցից ներկայացնում են ֆինանսական ակտիվներ և պարտավորություններ, որոնք՝

- հիմնականում ձեռք են բերվել կամ առաջացել են մոտ ապագայում վաճառելու կամ հետ գնելու նպատակով,
- կազմում են միասին կառավարվող որոշված ֆինանսական գործիքների պորտֆելի մաս, որի համար առկա է վկայություն կարճ ժամկետում շահույթ ստանալու արդիական փաստացի ուղիների վերաբերյալ,
- հանդիսանում են ածանցյալ ֆինանսական գործիք (բացառությամբ ֆինանսական երաշխավորության պայմանագիր հանդիսացող ածանցյալ գործիքի կամ այն ածանցյալ գործիքի, որը նախատեսված է և հանդիսանում է արդյունավետ հեջավորման գործիք), կամ
- սկզբնական ճանաչման պահին Ընկերության կողմից նախատեսվում են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ:

Ընկերությունը ֆինանսական ակտիվները և պարտավորությունները նախատեսում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ստորև ներկայացված պայմաններից մեկի բավարարման դեպքում.

- ակտիվները կամ պարտավորությունները կառավարվում, գնահատվում և ներկայացվում են իրական արժեքի հիմունքով,
- նախատեսումը վերացնում կամ էականորեն նվազեցնում է հաշվապահական անհամապատասխանությունները, որոնք կառաջանային այլ հանգամանքներում, կամ
- ակտիվը կամ պարտավորությունը ներառում է պարունակվող ածանցյալ գործիք, որը էականորեն ձևավոխում է դրամական միջոցների հոսքերը, որոնք այլապես կպահանջվեին պայմանագրի համաձայն:

Վարկերը և դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներն են, որոնք գնանշված չեն գործող շուկայում, բացառությամբ այն գործիքների՝

- որոնք Ընկերությունը մտադիր է ամիջապես կամ կարճ ժամկետում վաճառել,
- որոնք Ընկերությունը սկզբնական ճանաչման պահին նախատեսում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող,
- որոնք Ընկերությունը սկզբնական ճանաչման պահին նախատեսում է որպես վաճառքի համար մատչելի, կամ
- որոնք գծով Ընկերությունը չի փոխհատուցի իր բոլոր սկզբնական ներդրումները՝ վճարունակության անկարողությունից տարբեր այլ պատճառներով:

Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումները ֆիքսված կամ որոշելի վճարումներով և ֆիքսված մարման ժամկետով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներն են, որոնք Ընկերությունը մտադրված է և հնարավորություն ունի պահել մինչև մարման ժամկետի լրանալը, բացառությամբ այն ներդրումների՝

- որոնք սկզբնական ճանաչման պահին Ընկերությունը նախատեսում է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող,
- որոնք Ընկերությունը նախատեսում է որպես վաճառքի համար մատչելի, կամ
- որոնք համապատասխանում են վարկերի ու դեբիտորական պարտքերի սահմանմանը:

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներն իրենցից ներկայացնում են այնպիսի ֆինանսական ակտիվներ, որոնք նախատեսված են որպես վաճառքի համար մատչելի կամ դասակարգված չեն որպես վարկեր ու դեբիտորական պարտքեր, մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ կամ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ:

(iv) Ծանաչում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Ընկերությունը դառնում է գործիքի պայմանագրային կողմ: Ֆինանսական ակտիվների կանոնավոր կերպով գնումները հաշվառվում են առք ու վաճառքի ամսաթվի դրությամբ:

(v) Չափում

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական չափումը տեղի է ունենում իրական արժեքով: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների խմբում չդասակարգված ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների դեպքում իրական արժեքին գումարվում են գործարքի հետ կապված ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Սկզբնական ճանաչումից հետո ֆինանսական ակտիվները, ներառյալ ակտիվ համարվող ածանցյալ գործիքները, չափվում են իրական արժեքով՝ առանց նվազեցնելու գործարքի հետ կապված ծախսումները, որոնք կարող են առաջանալ վաճառքի կամ այլ օտարման հետ կապված, բացառությամբ՝

- վարկերի ու դեբիտորական պարտքերի, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույթի մեթոդը,
- մինչև մարման ժամկետը պահվող ներդրումների, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույթի մեթոդը, և
- բաժնային գործիքներում ներդրումների, որոնք գործող շուկայում չունեն գնանշվող շուկայական գին, որոնց իրական արժեքները հնարավոր չէ արժանահավատորեն չափել և որոնք չափվում են սկզբնական արժեքով:

Բոլոր ֆինանսական պարտավորությունները չափվում են ամորտիզացված արժեքով, բացառությամբ այն ֆինանսական պարտավորությունների, որոնք նախատեսված են որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող և այն ֆինանսական պարտավորությունների, որոնք առաջանում են, երբ իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվի փոխանցումը չի բավարարում ապաճանաչման պահանջները:

(vi) Ամորտիզացված արժեք

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ամորտիզացված արժեքն իրենից ներկայացնում է այն գումարը, որով ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունը չափվում է սկզբնական ճանաչման պահին՝ հանած մայր գումարի վճարումները, գումարած կամ հանած սկզբնապես ճանաչված գումարի և մարման պահին գումարի տարբերության կուտակված ամորտիզացիան, որը հաշվարկվել է կիրառելով արդյունավետ տոկոսադրույթի մեթոդը՝ հանած արժեզրկումից կորուստը: Հավելավճարները և զեղչերը, ներառյալ գործարքի հետ կապված սկզբնական ծախսումները, ընդգրկված են համապատասխան գործիքի հաշվեկշռային արժեքում և ամորտիզացվում են՝ կիրառելով գործիքի արդյունավետ տոկոսադրույթի մեթոդը:

(vii) Իրական արժեքի չափման սկզբունքներ

Իրական արժեքն այն գինն է, որը շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում կատարվող ակտիվի վաճառքից կամ կվճարվեր պարտավորության փոխանցման դիմաց չափման ամսաթվի դրությամբ հիմնական շուկայում կամ, վերջինիսի բացակայության դեպքում, ամենաբարենպաստ շուկայում, որին մուտքի հնարավորություն ունի Ընկերությունը նշված ամսաթվի դրությամբ: Պարտավորության իրական արժեքն արտացոլում է վերջինիս չկատարման ռիսկը:

Հնարավորության դեպքում, Ընկերությունը չափում է գործիքի իրական արժեքը՝ կիրառելով այդ գործիքի համար ակտիվ շուկայում գնանշվող գները: Շուկան համարվում է ակտիվ, եթե ակտիվի կամ պարտավորության գծով գործարքները տեղի են ունենում բավարար հաճախականությամբ և բավարար ծավալով՝ շարունակական հիմունքով գնային տեղեկատվություն տրամադրելու համար:

Ակտիվ շուկայում գնանշվող գնի բացակայության դեպքում, Ընկերությունը կիրառում է գնահատման մեթոդներ՝ դիտարկելի տվյալների օգտագործումն առավելագույնի և ոչ դիտարկելի տվյալների օգտագործումը նվազագույնի հասցնելու նպատակով: Ընտրված գնահատման մեթոդը ներառում է բոլոր այն գործոնները, որոնք շուկայի մասնակիցները հաշվի կառնեին մյուս հանգամանքներում:

Սկզբնական ճանաչման պահին ֆինանսական գործիքի իրական արժեքի լավագույն ապացույցը սովորաբար գործարքի գինն է, այսինքն՝ տրված կամ ստացված հատուցման իրական արժեքը: Եթե Ընկերությունը որոշում է, որ սկզբնական ճանաչման պահին իրական արժեքը տարբերվում է գործարքի գնից, և իրական արժեքը չի հիմնավորվում է ակտիվ շուկայում մասնատիպ ակտիվի կամ պարտավորության համար գնանշվող գնով կամ հիմնված չէ գնահատման այնպիսի մեթոդի վրա, որն օգտագործում է միայն դիտարկելի տվյալները, ապա ֆինանսական գործիքի սկզբնական չափումն իրականացվում է իրական արժեքով՝ ճշգրտված սկզբնական ճանաչման պահին իրական արժեքի և գործարքի գնի միջև տարբերության հետաձգումով: Հետագայում, տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում համապատասխան հիմունքով՝ գործիքի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում, սակայն ոչ ուշ այն պահից, երբ գնահատումն ամբողջովին հիմնավորվում է շուկայի դիտարկելի տվյալներով կամ գործարքն ավարտվում է:

Եթե իրական արժեքով չափվող ակտիվը կամ պարտավորությունն ունի պահանջարկի և առաջարկի գին, ապա Ընկերությունը չափում է ակտիվները և երկար դիրքերը պահանջարկի գնով, իսկ պարտավորությունները և կարճ դիրքերը՝ առաջարկի գնով:

Ընկերությունը ճանաչում է իրական արժեքի հիերարխիայի մակարդակների միջև տեղի ունեցող փոխանցումներն այն հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ, որի ընթացքում կատարվել են այդ փոփոխությունները:

(viii) Հետագա չափման հետևանքով առաջացած շահույթ և վնաս

Ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների իրական արժեքի փոփոխությունից առաջացած շահույթը կամ վնասը ճանաչվում է հետևյալ կերպ.

- շահույթում կամ վնասում ճանաչվում է այն ֆինանսական գործիքի գծով շահույթը կամ վնասը, որը դասակարգված է որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող,
- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով շահույթը կամ վնասը ճանաչվում է սեփական կապիտալում՝ որպես այլ համապարփակ ֆինանսական

արդյունք (բացառությամբ արժեզրկումից կորուստների և վաճառքի համար մատչելի պարտքային ֆինանսական գործիքների գծով փոխարժեքային տարբերություններից առաջացած շահույթի և վնասի), մինչև որ նշված ակտիվն ապաճանաչվում է և այդ պահին կուտակված շահույթը կամ վնասը, որը նախկինում ճանաչվել էր սեփական կապիտալում, ճանաչվում է շահույթում կամ վնասում: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվի գծով տոկոսները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով շահույթը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում, երբ ֆինանսական ակտիվը կամ պարտավորությունն ապաճանաչվում է կամ արժեզրկվում է, ինչպես նաև՝ ամորտիզացիայի հաշվարկի ընթացքում:

(ix) Ապաճանաչում

Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական ակտիվն այն դեպքում, երբ ֆինանսական ակտիվից առաջացող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը, կամ երբ փոխանցում է ֆինանսական ակտիվն այնպիսի գործարքում, որում փոխանցվում են ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները, կամ որում Ընկերությունը ոչ պահպանում, ոչ էլ փոխանցում է սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերն ու հատույցները և չի պահպանում ֆինանսական ակտիվի նկատմամբ վերահսկողությունը: Ապաճանաչման պայմանները բավարարող փոխանցված ֆինանսական ակտիվի գծով տոկոսները, որոնք առաջացել կամ պահպանվել են Ընկերության կողմից, ճանաչվում են որպես առանձին ակտիվ կամ պարտավորություն ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում:

Ընկերությունն ապաճանաչում է ֆինանսական պարտավորությունը, երբ պայմանագրային պարտականությունները կատարվում են, կամ չեղյալ են համարվում, կամ ուժը կորցնում են:

Գործարքներում, որոնցում Ընկերությունը ոչ փոխանցում է, ոչ էլ պահպանում է ֆինանսական ակտիվի սեփականության հետ կապված, ըստ էության, բոլոր ռիսկերն ու հատույցները, այն ապաճանաչում է ակտիվը, եթե կորցնում է դրա նկատմամբ վերահսկողությունը:

Փոխանցումների այն գործարքներում, որոնցում Ընկերությունը պահպանում է ակտիվի նկատմամբ վերահսկողությունը, Ընկերությունը շարունակում է ճանաչել ֆինանսական ակտիվը այնքանով, որքանով շարունակվում է իր ներգրավվածությունը ֆինանսական ակտիվի մեջ, որն այն չափն է, որով նա ենթարկված է փոխանցված ակտիվի արժեքի փոփոխությունների ազդեցությանը:

Եթե Ընկերությունը ձեռք է բերում իր սեփական պարտքը, ապա այն դուրս է բերվում ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունից, և պարտավորության հաշվեկշռային արժեքի ու վճարված հատուցման տարբերությունը ներառվում է պարտքի ժամկետից շուտ մարման արդյունքում առաջացած շահույթում կամ վնասում:

Ընկերությունը դուրս է գրում անհավաքագրելի համարվող ակտիվները:

(x) Հաշվանցում

Ֆինանսական ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում արտացոլվելով զուտ գումարով, եթե գոյություն ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը զուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվն իրացնելու և պարտավորությունը մարելու մտադրություն:

(զ) Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցների միավորները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները:

Երբ հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարբեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ:

Մաշվածություն

Մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը առանձին ակտիվների օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է հիմնական միջոցի ձեռք բերման պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններս կառուցումն ավարտելու և շահագործման հանձնելու պահից: Օգտակար ծառայության գնահատված ժամկետները հետևյալն են.

- | | |
|--------------------------------------|-----------|
| - Վարձակալված գույքի բարելավում | 13.3 տարի |
| - Տնտեսական գույք | 3.3 տարի |
| - Փոխադրամիջոցներ | 3.3 տարի |
| - Համակարգիչներ և այլ սարքավորումներ | 1 տարի |

(ե) Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ Ընկերությունը գնահատում է, թե արդյոք առկա է անկողմնակալ վկայություն ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական ակտիվների խմբի արժեզրկված լինելու մասին: Նման վկայության առկայության դեպքում, Ընկերությունը որոշում է արժեզրկումից կորստի գումարը:

Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական ակտիվների խումբն արժեզրկվում է, և արժեզրկումից կորուստներ ճանաչվում են այն և միայն այն դեպքում, երբ առկա է անկողմնակալ վկայություն ֆինանսական ակտիվի սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ ավելի դեպքերի արդյունք հանդիսացող արժեզրկման մասին (կորստի դեպք), և այդ դեպքը (կամ դեպքերը) ազդեցություն է ունեցել ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական ակտիվների խմբի գծով դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերի վրա, որոնք հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ֆինանսական ակտիվների արժեզրկման անկողմնակալ վկայությունը կարող է ներառել պարտավորությունների չկատարումը կամ վճարումների հետաձգումը վարկառուի կողմից, վարկային պայմանագրի պայմանների խախտումները վարկառուի կողմից, ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական ակտիվների խմբի պայմանների այնպիսի վերանայումը, որը Ընկերությունն այլ հանգամանքներում չէր դիտարկի, վարկառուի կամ թողարկողի սնանկացման հայտանիշները, արժեթղթի համար գործող շուկայի վերացումը, գրավի արժեքի նվազումը կամ ակտիվների խմբին վերաբերող այլ դիտարկելի տվյալները, այդ թվում՝ խմբի կազմի մեջ մտնող վարկառուների վճարունակության վատթարացումը, կամ տվյալ խմբի կազմի մեջ մտնող վարկառուների կողմից պարտականությունների չկատարման հետ փոխկապակցված տնտեսական պայմանների փոփոխությունը:

Բացի այդ, վաճառքի համար մատչելի բաժնային արժեթղթերում ներդրման իրական արժեքի՝ իր սկզբնական արժեքից նշանակալի կամ տևողական նվազումը նույնպես հանդիսանում է արժեզրկման անկողմնակալ վկայություն:

(i) Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները հիմնականում ներառում են վարկերը և այլ դեբիտորական պարտքերը: Ընկերությունը վերանայում է իր վարկերը և դեբիտորական պարտքերը՝ արժեզրկումը կանոնավոր հիմունքով գնահատելու նպատակով:

Ընկերությունը նախ գնահատում է, թե արդյոք գոյություն ունի արժեզրկման անկողմնակալ վկայություն այն առանձին վարկերի ու դեբիտորական պարտքերի գծով, որոնք առանձին վերցված նշանակալի են, և ապա առանձին կամ հավաքական հիմունքով՝ այն վարկերի ու դեբիտորական պարտքերի գծով, որոնք առանձին վերցված նշանակալի չեն: Եթե Ընկերությունը որոշում է, որ առանձին գնահատված վարկի կամ դեբիտորական պարտքի գծով՝ լինի այն նշանակալի կամ ոչ նշանակալի, արժեզրկման անկողմնակալ վկայություն չկա, ապա այն ներառում է այդ վարկը կամ դեբիտորական պարտքը պարտքային ռիսկի համանման բնութագրերով վարկերի և դեբիտորական պարտքերի խմբում և դրանք հավաքական հիմունքով գնահատում արժեզրկման տեսանկյունից: Այն վարկերը և դեբիտորական պարտքերը, որոնք առանձին են գնահատվում արժեզրկման տեսանկյունից, և որոնց գծով արժեզրկումից կորուստը ճանաչվում կամ շարունակվում է ճանաչվել, չեն ներառվում արժեզրկման հավաքական հիմունքով գնահատման մեջ:

Եթե առկա է վարկի կամ դեբիտորական պարտքի գծով արժեզրկումից կորստի անկողմնակալ վկայություն, ապա կորստի գումարը չափվում է որպես վարկի կամ դեբիտորական պարտքի հաշվեկշռային արժեքի և այդ վարկի կամ դեբիտորական պարտքի սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի, ներառյալ երաշխիքների գծով ստացվելիք գումարների և գրավի ներկա արժեքի միջև տարբերությունը: Պայմանագրով նախատեսված դրամական միջոցների հոսքերը և նախկին փորձի վրա հիմնված վնասները, որոնց գծով ներկա տնտեսական պայմաններն արտացոլող դիտարկելի տվյալների հիման վրա կատարվել են ճշգրտումներ, հանդիսանում են դրամական միջոցների ակնկալվող հոսքերի գնահատման հիմք:

Որոշ դեպքերում դիտարկելի տվյալները, որոնք պահանջվում են վարկի կամ դեբիտորական պարտքի գծով արժեզրկումից կորստի չափը գնահատելու համար, կարող են լինել սահմանափակ կամ այլևս ոչ ամբողջությամբ առնչվող տվյալ հանգամանքներին: Դա կարող է տեղի ունենալ, երբ վարկառուն ֆինանսական դժվարությունների մեջ է, և համանման վարկառուների վերաբերյալ քիչ պատմական տվյալներ կան: Այդպիսի դեպքերում, ցանկացած արժեզրկումից կորստի չափը գնահատելու համար Ընկերությունն օգտագործում է իր փորձը և դատողությունները:

Վարկերի և դեբիտորական պարտքերի գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում և հակադարձվում են այնքանով, որքանով փոխհատուցվող գումարի հետագա աճը կարելի է անկողմնակալորեն կապել արժեզրկումից կորստի ճանաչումից հետո տեղի ունեցած իրադարձությանը:

(ii) Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից կորուստները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված կուտակված վնասը փոխանցելով շահույթի կամ վնասի կազմ՝ որպես վերադասակարգման ճշգրտում: Կուտակված վնասը, որը այլ համապարփակ ֆինանսական արդյունքից վերադասակարգվում է շահույթի կամ վնասի կազմ, հանդիսանում է ձեռքբերման արժեքի՝ հանած մայր գումարի մարումները ու մաշվածությունը, և ընթացիկ իրական արժեքի՝ հանած նախկինում շահույթում կամ վնասում ճանաչված արժեզրկումից կորուստները, միջև տարբերությունը: Ժամանակի արժեքին վերագրելի արժեզրկման գծով պահուստի փոփոխություններն արտացոլվում են որպես տոկոսային եկամտի բաղադրիչ:

Եթե հետագա ժամանակաշրջանում արժեզրկված վաճառքի համար մատչելի պարտքային արժեքի իրական արժեքն աճում է, և այդ աճը հնարավոր է անկողմնակալորեն կապել շահույթում կամ վնասում արժեզրկումից կորստի ճանաչումից հետո տեղի ունեցած իրադարձությանը, ապա արժեզրկումից կորուստը հակադարձվում է, իսկ հակադարձված գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Այնուամենայնիվ, արժեզրկված վաճառքի համար մատչելի բաժնային արժեքի իրական արժեքի ցանկացած հետագա վերականգնումը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում:

(ը) Ոչ ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ այլ ոչ ֆինանսական ակտիվները, բացառությամբ հետաձգված հարկերի, գնահատվում են արժեզրկման հայտանիշ բացահայտելու նպատակով: Գույքի փոխհատուցվող գումարը գնահատվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ: Ոչ ֆինանսական ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է որպես նրանց իրական արժեքից (հանած վաճառքի ծախսերը) և օգտագործման արժեքից առավելագույնը: Օգտագործման արժեքը գնահատելիս դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը զեղչվում են իրենց ներկա արժեքով՝ օգտագործելով մինչև հարկումը զեղչման այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ փողի արժեքի շուկայի ներկա գնահատականը և ակտիվին բնորոշ ռիսկերը: Այլ ակտիվներից առաջացող դրամական միջոցների ներհոսքից մեծապես անկախ և դրամական միջոցների ներհոսք չառաջացնող ակտիվների փոխհատուցվող գումարը որոշվում է այն դրամաստեղծ միավորի համար, որին պատկանում է տվյալ ակտիվը: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է, երբ ակտիվի կամ նրա դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է նրա փոխհատուցվող գումարը:

Ոչ ֆինանսական ակտիվների գծով արժեզրկումից կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում և հակադարձվում է միայն այն դեպքում, եթե փոխվել են փոխհատուցվող գումարը որոշելու համար օգտագործվող գնահատումները: Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որ ակտիվի հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլինե՝ առանց համապատասխան մաշվածության և անորտիզացիայի, եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

(թ) Պահուստներ

Պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում է, երբ Ընկերությունը որպես անցյալ դեպքերի արդյունք ունի իրավական կամ կառուցողական պարտականություն, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե ազդեցությունն էական է, պահուստները որոշվում են զեղչելով ակնկալվող դրամական հոսքերը՝ օգտագործելով զեղչման մինչև հարկումը գործող այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի շուկայի ներկա գնահատականը և, անհրաժեշտության դեպքում՝ պարտավորությանը բնորոշ ռիսկերը:

(ժ) Բաժնետիրական կապիտալ

(i) Սովորական բաժնետոմսեր

Սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Սովորական բաժնետոմսերի և բաժնետոմսերի օպցիոնների թողարկմանն ուղղակիորեն վերագրելի լրացուցիչ ծախսերը ճանաչվում են որպես սեփական կապիտալի նվազեցում՝ առանց հարկային հետևանքների:

(ii) Շահաբաժիններ

Շահաբաժիններ հայտարարելու և վճարելու ընկերության կարողությունը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը սահմանված կանոնակարգերով:

Սովորական բաժնետոմսերի շահաբաժիններն արտացոլվում են որպես չբաշխված շահույթի բաշխում այն ժամանակահատվածում, երբ հայտարարվում են:

(ի) Աշխատակիցների հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով պարտականությունները չափվում են առանց զեղչման և ծախսագրվում են համապատասխան ծառայությունը մատուցելուց հետո: Պարտավորությունը ճանաչվում է այն գումարի չափով, որն ակնկալվում է վճարել կարճաժամկետ դրամական միջոցների տեսքով պարգևավճարների կամ շահույթի բաշխումների միջոցով, եթե ընկերությունն ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն այդ գումարը վճարել որպես անցյալ ծառայության արդյունք կամ կարող է արժանահավատորեն գնահատել պարտականությունը:

(լ) Հարկում

Շահութահարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Շահութահարկը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մասի, որը վերաբերում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքի հողվածներին կամ ուղղակիորեն սեփական կապիտալում ճանաչված բաժնետերերի հետ իրականացված գործառնություններին, որի դեպքում շահութահարկը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում կամ ուղղակիորեն սեփական կապիտալում:

Ընթացիկ հարկը տարվա հարկվող եկամտի գծով ակնկալվող վճարման ենթակա հարկի գումարն է, որը հաշվարկվում է՝ կիրառելով հարկերի այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ, և նախորդ տարիների վճարման ենթակա հարկերի գծով կատարված ճշգրտումները:

Հետաձգված հարկը ճանաչվում է ֆինանսական հաշվետվությունների նպատակների համար օգտագործվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկային նպատակների համար օգտագործվող գումարների միջև ժամանակավոր տարբերությունների գծով: Հետաձգված հարկը չի ճանաչվում հետևյալ ժամանակավոր տարբերությունների համար. հարկային նպատակների համար չնվազեցվող գույքի, ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչում, որն ազդեցություն չունի հաշվապահական կամ հարկվող շահույթի վրա, ժամանակավոր տարբերություններ, որոնք վերաբերում են այն դուստր կազմակերպություններում կատարած ներդրումներին, որտեղ մայր կազմակերպությունն ի վիճակի է վերահսկել ժամանակավոր տարբերությունների

հակադարձման ժամկետները և հավանական է, որ ժամանակավոր տարբերությունները չեն հակադարձվի մոտ ապագայում: Հետաձգված հարկերը չափվում են կիրառելով հարկերի այն դրույթները, որոնք ակնկալվում է, որ կկիրառվեն ժամանակավոր տարբերությունների նկատմամբ վերջիններս հակադարձելիս՝ հիմք ընդունելով այն օրենքների դրույթները, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ:

Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են միայն այն չափով, որքանով հավանական է, որ առկա կլինի ապագա հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել ժամանակավոր տարբերությունները, չօգտագործված հարկային վնասները և արտոնությունները: Հետաձգված հարկային ակտիվները նվազեցվում են այնքանով, որքանով հավանական չէ, որ համապատասխան հարկային փոխհատուցումը կարող է իրացվել:

(խ) Գործառնական վարձակալություն

Գործառնական վարձակալության գծով կատարված վճարները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը վարձակալության գործողության ժամկետի ընթացքում: Վարձակալության գծով ստացված խրախուսող պայմանները ճանաչվում են որպես վաճակալության գծով ընդհանուր ծախսի բաղկացուցիչ մաս վարձակալության գործողության ժամկետի ընթացքում:

(ծ) Դեռևս չկիրառվող նոր ստանդարտներ և մեկնաբանություններ

Մի շարք նոր ստանդարտներ, ստանդարտների փոփոխություններ և մեկնաբանություններ չէին գործում 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ և չեն կիրառվել այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս: Այդ ստանդարտներից և փոփոխություններից ստորև ներկայացվածները հնարավոր է, որ ազդեցություն կունենան Ընկերության ֆինանսական վիճակի և գործունեության վրա: Ընկերությունը մտադիր է կիրառել այդ ստանդարտները և դրանց փոփոխությունները, երբ վերջիններս մտնեն ուժի մեջ: Ներկայումս Ընկերությունը գնահատում է նոր պահանջների կիրառման հնարավոր ազդեցությունն իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

Նոր կամ փոփոխված ստանդարտ	Պահանջների ամփոփ նկարագիր
ՖՀՄՍ 9 «Ֆինանսական գործիքներ»	2014թ. հուլիսին իրապարակված ՖՀՄՍ 9-ը փոխարինում է ՀՀՄՍ 39 «Ֆինանսական գործիքներ. ճանաչում և չափում» ստանդարտի գործող ուղեցույցները: ՖՀՄՍ 9-ը պարունակում է վերանայված ուղեցույցներ ֆինանսական գործիքների դասակարգման և չափման համար, ներառյալ ֆինանսական ակտիվների արժեզրկման հաշվարկի համար կիրառվող սպասվող վնասի նոր մոդելը, և հեջի ընդհանուր հաշվառմանը վերաբերող նոր պահանջները: Այն ներառում է նաև ՀՀՄՍ 39-ով սահմանված ֆինանսական գործիքների ճանաչման և ապաճանաչման ուղեցույցները: ՖՀՄՍ 9-ը կգործի 2018թ. հունվարի 1-ին և հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար և կարող է կիրառվել ժամանակից շուտ:

Նոր կամ փոփոխված ստանդարտ	Պահանջների ամփոփ նկարագիր
<p>ՖՀՄՍ 15 <i>«Հաճախորդների հետ կնքված պայմանագրերից ստացվող հասույթ»</i></p>	<p>ՖՀՄՍ 15 ստանդարտը սահմանում է համապարփակ հիմունքներ, որոշելու համար, թե որ հանգամանքներում, ինչ չափով և երբ պետք է ճանաչվի հասույթը: Ստանդարտը փոխարինում է հասույթի ճանաչման ներկայումս գործող ուղեցույցները, ներառյալ ՀՀՄՍ 18 «Հասույթ», ՀՀՄՍ 11 «Կառուցման պայմանագրեր» և ՖՀՄՄԿ մեկնաբանություն 13 «Հաճախորդի հավատարմության ծրագրեր» պահանջները:</p> <p>Նոր ստանդարտի հիմնական սկզբունքի համաձայն՝ կազմակերպությունը պետք է ճանաչի հասույթը՝ ապրանքների կամ ծառայությունների փոխանցումը հաճախորդներին այն գումարով ներկայացնելու համար, որն արտացոլում է հատուցումը, որը կազմակերպությունն ակնկալում է ստանալ այդ ապրանքների կամ ծառայությունների դիմաց: Նոր ստանդարտով կպահանջվեն նաև լրացուցիչ բացահայտումներ հասույթի համար, կտրամադրվի ուղեցույց նախկինում համապարփակ կերպով չուսումնասիրվող գործառնությունների համար, կկատարելագործվեն մի քանի բաղադրիչներից բաղկացած համաձայնություններին վերաբերող ուղեցույցները:</p> <p>ՖՀՄՍ 15 կգործի 2018թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար և կարող է կիրառվել ժամանակից շուտ:</p>
<p>ՖՀՄՍ 16 <i>«Վարձակալություն»</i></p>	<p>ՖՀՄՍ 16-ը փոխարինում է ՀՀՄՍ 17 «Վարձակալություն», ՖՀՄՄԿ մեկնաբանություն 4 «Համաձայնություններում վարձակալության առկայության որոշում», ՄՄԿ մեկնաբանություն 15 «Գործառնական վարձակալություն. խրախուսող պայմաններ» և ՄՄԿ մեկնաբանություն 27 «Վարձակալության իրավական ձև ներառող գործարքների բովանդակության գնահատումը» սահմանված վարձակալության հաշվառման ուղեցույցները: Այս ստանդարտով այլևս չի կիրառվում հաշվառման կրկնակի մոդելը վարձակալների համար, որով տարանջատվում են հաշվեկշռային ֆինանսական վարձակալությունը և արտահաշվեկշռային գործառնական վարձակալությունը: Փոխարենը, կիրառվում է մեկ՝ հաշվեկշռային հաշվառման մոդել, որը նման է ներակայիս ֆինանսական վարձակալության հաշվառմանը:</p> <p>Վարձատուների համար հաշվառման ներկայիս մոտեցումը չի փոփոխվում, նրանք շարունակում են դասակարգել վարձակալությունը ֆինանսական և գործառնական դասերի:</p> <p>ՖՀՄՍ 16-ը կգործի 2019թ. հունվարի 1-ին և հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար և կարող է կիրառվել ժամանակից շուտ՝ նաև ՖՀՄՍ 15 «Հաճախորդների հետ պայմանագրերի գծով հասույթ» ստանդարտը կիրառելու պայմանով:</p>

4 Կոմիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտ

	2015թ. հազ. դրամ	2014թ. հազ. դրամ
Ֆոնդերի կառավարման վճարներ	116,837	22,300
Ուղղորդման կոմիսիոն վճարներ	96,430	94,779
Այլ	4,208	-
	217,475	117,079

2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բոլոր երեք ֆոնդերի ընդհանուր գուտ ակտիվների արժեքը կազմում է 16,187,771 հազար դրամ (2014թ-ին՝ 6,275,338 հազար դրամ):

5 Աշխատակազմի գծով ծախսեր

	2015թ. հազ. դրամ	2014թ. հազ. դրամ
Աշխատակիցների վարձատրություն	157,744	157,382
Աշխատակազմի գծով այլ ծախսեր և հատուցումներ	16,776	11,810
	174,520	169,192

6 Այլ ծախսեր

	2015թ. հազ. դրամ	2014թ. հազ. դրամ
Պահառության վճարներ	31,704	6,044
Գործառնական վարձակալություն	30,737	20,129
Փոստային և հաղորդակցության ծառայությունների գծով ծախսեր	18,918	7,843
Ֆոնդերի կառավարչական և հաշվառման ծախսեր	15,464	11,202
Ստացված մասնագիտական ծառայություններ	16,261	9,801
Մաշվածության ծախսեր	12,103	6,142
Գործուղման ծախսեր	5,960	13,216
Այլ	16,990	29,414
	148,137	103,791

Ընկերությունը վարձակալում է համակարգիչներ, համակարգչային ծրագրեր և գրասենյակային տարածք գործառնական վարձակալության պայմաններով:

Գրասենյակային տարածքի վարձակալության պայմանագիրը իրենից ներկայացնում է չեղյալ չհամարվող վարձակալություն՝ չորս տարի ժամկետով: 2015թ. ընթացքում գրասենյակային տարածքի վարձակալության հետ կապված ճանաչվել է 26,555 հազար դրամ գումարով գործառնական վարձակալության գծով ծախս (2014թ-ին՝ 16,835 հազար դրամ):

Դեկտեմբերի 31-ի դրությամբ չեղյալ չհայտարարվող գործառնական վարձակալության գծով վճարները հետևյալն են.

	2015թ. հազ. դրամ	2014թ. հազ. դրամ
Մինչև մեկ տարի ժամկետով	26,555	23,220
Մեկից հինգ տարի ժամկետով	33,932	52,890
	60,487	76,110

7 Ծախուրահարկի գծով ծախս

	2015թ. հազ. դրամ	2014թ. հազ. դրամ
Ժամանակավոր տարբերությունների առաջացում և հակադարձում	10,478	15,174
Չճանաչված նվազեցվող ժամանակավոր տարբերությունների փոփոխություն	(10,478)	(15,174)
Ընդամենը շահութահարկի գծով ծախս	-	-

2015թ-ին ընթացիկ և հետաձգված հարկերի գծով կիրառելի հարկային դրույքը կազմում է 20% (2014թ-ին՝ 20%):

	2015թ. հազ. դրամ	%	2014թ. հազ. դրամ	%
Վնաս նախքան հարկումը	(85,202)		(112,734)	
Ծախուրահարկ՝ կիրառելի հարկային դրույքով	17,040	20.0%	22,547	20.0%
Չնվազեցվող ծախսեր	(6,562)	(7.7%)	(7,384)	(6.5%)
Չճանաչված հետաձգված հարկային ակտիվների փոփոխություն	(10,478)	(12.3%)	(15,163)	(13.5%)
	-	-	-	-

Հետաձգված հարկային ակտիվներ չեն ճանաչվել հետևյալ հոդվածների գծով.

	2015թ. հազ. դրամ	2014թ. հազ. դրամ
Հիմնական միջոցներ	659	-
Հարկային վնաս	27,260	17,441
	27,919	17,441

Հարկային վնասն օգտագործելու իրավունքը սպառվում է 2018թ-ից 2020թ. ընկած ժամանակաշրջանում: Հետաձգված հարկային ակտիվներ չեն ճանաչվել այս հոդվածների գծով, քանի որ բացակայում են համոզիչ փաստարկներ, որ Ընկերությունն ապագայում կունենա հարկվող շահույթ. որի դիմաց կկարողանա իրացնել այդ հոդվածներից ստացված օգուտները:

8 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	2015թ. հազ. դրամ	2014թ. հազ. դրամ
Ընթացիկ հաշվիներ բանկերում		
5 խոշոր հայկական բանկեր	14,574	42,521
Կարճաժամկետ ավանդներ բանկերում		
5 խոշոր հայկական բանկեր	81,382	60,386
Ընդամենը դրամական միջոցները և դրանց համարժեքները	95,956	102,907

Դրամական միջոցները և դրանց համարժեքներն արժեզրկված կամ ժամկետանց չեն:

2015թ. և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բոլոր բանկային հաշիվների մնացորդները պահվում են կապակցված կողմ հանդիսացող բանկում:

Դրամական միջոցների և դրանց համարժեքների մնացորդների իրական արժեքը մոտավորապես համապատասխանում է վերջիններիս հաշվեկշռային արժեքին:

9 Պահանջներ բանկերի նկատմամբ

	2015թ. հազ. դրամ	2014թ. հազ. դրամ
Ժամկետային ավանդներ բանկերում		
5 խոշոր հայկական բանկեր	151,435	204,338
Ընդամենը պահանջներ կապակցված բանկերից	151,435	204,338

Բանկերի նկատմամբ պահանջներն արժեզրկված կամ ժամկետանց չեն:

2015թ. և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բոլոր բանկային հաշիվների մնացորդները պահվում են կապակցված բանկում:

Բանկերի նկատմամբ պահանջների իրական արժեքը մոտավորապես համապատասխանում է վերջիններիս հաշվեկշռային արժեքին:

10 Վաճառքի համար մատչելի ներդրումներ

	2015թ. հազ. դրամ	2014թ. հազ. դրամ
Ներդրումներ կենսաթոշակային ֆոնդերում		
«ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ» կայուն և կամտային	62,525	58,637
«ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ» պահպանողական	159,195	101,132
«ԱՄՈՒՆԴԻ-ԱԿԲԱ» հավասարակշռված	66,142	62,122
Ընդամենը վաճառքի համար մատչելի ներդրումներ	287,862	221,891

Ֆոնդերում ունեցած բաժնեմասերը գնանշված չեն ակտիվ շուկայում:

ՀՀ օրենսդրության համաձայն՝ Ընկերությունը պարտավոր է կատարել առնվազն 1% ներդրում յուրաքանչյուր ֆոնդում որպես կառավարիչ:

2015թ. և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ վաճառքի համար մատչելի ներդրումների իրական արժեքի չափումը դասվում է իրական արժեքի հիերարխիայի 2-րդ մակարդակին: Ներդրումների իրական արժեքը որոշվել է ֆոնդերի գուտ ակտիվների արժեքում ունեցած Ընկերության բաժնեմասին հիման վրա: Ֆոնդերում հիմքում ընկած ակտիվների իրական արժեքը որոշելու համար կիրառվել են գնահատման հետևյալ մեթոդները.

Գնահատման մեթոդ

Չեղված դրամական միջոցների հոսքերի մեթոդ. Գնահատումը հիմնված է ակնկալվող վճարումների ներկա արժեքի վրա՝ գեղված ռիսկի ճշգրտումով գեղչման դրույքով:

Շուկայի համեմատական մեթոդ. Գնահատումը հիմնված է նույն գործիքների համար գնանշված գների վրա:

Ընկերության ներդրումների մոտավորապես 70%-ը (2014թ-ին՝ 73%) ունի հիմքում ընկած ակտիվներ ֆոնդերում՝ արտահայտված դրամով, որոնք հիմնականում իրենցից ներկայացնում են տեղական բանկերում պահվող ժամկետային ավանդներ ու ընթացիկ հաշիվներ և ՀՀ կառավարության պարտատոմսեր: Մնացած ակտիվները հիմնականում հանդիսանում են արտարժույթով արտահայտված բորսայական շրջանառություն ունեցող ֆոնդեր և ՀՀ կառավարության կամ տեղական բանկերի կողմից թողարկված պարտատոմսեր:

11 Հիմնական միջոցներ

հազ. դրամ	Վարձակալված գույքի բաղելավումներ	Տնտեսական գույք	Փոխադրա- միջոցներ	Համակարգիչներ և այլ սարքավորումներ	Ընդամենը
Մկզբնական արժեք					
Մնացորդը առ 1 հունվարի 2015թ.	27,614	19,250	13,523	589	60,976
Ավելացումներ	120	-	-	-	120
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2015թ.	27,734	19,250	13,523	589	61,096
Մաշվածություն					
Մնացորդը առ 1 հունվարի 2015թ.	(732)	(2,039)	(2,979)	(392)	(6,142)
Մաշվածություն	(2,073)	(5,776)	(4,057)	(197)	(12,103)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2015թ.	(2,805)	(7,815)	(7,036)	(589)	(18,245)
Հաշվեկշռային արժեք Առ 31 դեկտեմբերի 2015թ.	24,929	11,435	6,487	-	42,851
Մկզբնական արժեք					
Մնացորդը առ 1 հունվարի 2014թ.	-	-	-	-	-
Ավելացումներ	27,614	19,250	13,523	589	60,976
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2014թ.	27,614	19,250	13,523	589	60,976
Մաշվածություն					
Մնացորդը առ 1 հունվարի 2014թ.	-	-	-	-	-
Մաշվածություն	(732)	(2,039)	(2,979)	(392)	(6,142)
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2014թ.	(732)	(2,039)	(2,979)	(392)	(6,142)
Հաշվեկշռային արժեք Առ 31 դեկտեմբերի 2014թ.	26,882	17,211	10,544	197	54,834

12 Այլ ակտիվներ

	2015թ. հազ. դրամ	2014թ. հազ. դրամ
Ուղղորդման կոմիսիոն վճարների գծով ստացվելիք գումարներ	24,413	99,324
Ֆոնդերի կառավարման գծով ստացվելիք գումարներ	14,223	4,254
Ընդամենը այլ ֆինանսական ակտիվներ	38,636	103,578
Կանխավճարներ	2,404	11,385
Այլ ոչ ֆինանսական ակտիվներ	1,704	1,451
Ընդամենը այլ ոչ ֆինանսական ակտիվներ	4,108	12,836
Ընդամենը այլ ակտիվներ	42,744	116,414

Ուղղորդման կոմիսիոն վճարների գծով ստացվելիք գումարները վերաբերում են Ընկերության կապակցված կողմին:

Ֆոնդերի կառավարման գծով ստացվելիք գումարներն ակնկալվում են կառավարվող ֆոնդերից:

Ստացվելիք գումարները ժամկետանց կամ արժեզրկված չեն:

13 Բաժնետիրական կապիտալ

Հայտարարված, քողարկված և շրջանառության մեջ գտնվող բաժնետիրական կապիտալը բաղկացած է 2,500 սովորական բաժնետոմսից (2014թ-ին՝ 2,500): 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ բոլոր բաժնետոմսերի անվանական արժեքը կազմում է 320,000 դրամ (2014թ-ին՝ 320,000 դրամ):

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ժամանակ առ ժամանակ ստանալ հայտարարված շահաբաժինները և քվեարկել Ընկերության բաժնետերերի տարեկան և ընդհանուր ժողովներում՝ մեկ բաժնետոմս՝ մեկ ձայն սկզբունքով:

14 Ֆինանսական ռիսկերի կառավարում

Ֆինանսական գործիքներն օգտագործելիս Ընկերությունը ենթարկվում է շուկայական, պարտքային և իրացվելիության ռիսկերին:

(ա) Ռիսկերի կառավարման քաղաքականություն և ընթացակարգեր

Ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել, վերլուծել և կառավարել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Ընկերությունը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկման մեխանիզմներ, ինչպես նաև շարունակաբար վերահսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը որոշված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և ընթացակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների, առաջարկվող արտադրանքի ու ծառայությունների և ընդունված լավագույն մոտեցման փոփոխություններն արտացոլելու նպատակով:

Տնօրենների խորհուրդը պատասխանատու է ռիսկերի կառավարումը վերահսկող համակարգի պատշաճ աշխատանքի, հիմնական ռիսկերի կառավարման և ռիսկերի կառավարման քաղաքականության ու ընթացակարգերի վերանայման, ինչպես նաև խոշոր գործարքների հաստատման համար:

Ղեկավարությունը պատասխանատու է ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցառումների վերահսկման և իրականացման ու ռիսկերի համար սահմանված համապատասխան սահմանաչափերում Ընկերության գործունեությունն ապահովելու նպատակով:

(բ) Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է շուկայական գների փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկը ներառում է արտարժույթի, տոկոսադրույթի և այլ գնային ռիսկերը: Շուկայական ռիսկն առաջանում է տոկոսադրույթի, արտարժույթի և բաժնային ֆինանսական գործիքների բաց դիրքերի գծով, որոնք ենթարկվում են շուկայի ընդհանուր և առանձին փոփոխություններին ու շուկայական գների ու արտարժույթի փոխարժեքների տատանումների ազդեցությանը:

Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն են, որոնք թույլ կտան պահպանել այս ռիսկին ենթարկվածության աստիճանն ընդունելի սահմաններում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

(i) Տոկոսադրույթի ռիսկ

Տոկոսադրույթի ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է շուկայական տոկոսադրույթների փոփոխության արդյունքում: Ընկերությունը ենթարկվում է իր ֆինանսական վիճակի և դրամական միջոցների հոսքերի գերակայող շուկայական տոկոսադրույթների տատանումների ազդեցությանը:

Ընկերությունը չի հաշվառում ֆիքսված դրույքով ֆինանսական գործիքները որպես շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքներ կամ վաճառքի համար մատչելի գործիքներ: Այդ իսկ պատճառով, տոկոսադրույթների փոփոխությունը հաշվետու ամսաթվի դրությամբ ազդեցություն չի ունենա շահույթի կամ վնասի կամ սեփական կապիտալի վրա:

Թեև ֆոնդերը, որոնցում Ընկերությունը ներդրում ունի, ներառում են ֆիքսված եկամտով ակտիվներ, որոնք ենթարկվում են տոկոսադրույքների փոփոխություններով պայմանավորված իրական արժեքի փոփոխությունների, հնարավոր չէ հաշվարկել ֆոնդերում կատարած ներդրումների իրական արժեքի զգալունությունը՝ հաշվի առնելով հաշվետու ամսաթվերի դրությամբ տոկոսադրույքների հնարավոր տատանումները (ծանոթագրություն 10):

(ii) Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի ռիսկը ֆինանսական գործիքի իրական արժեքի կամ դրանից ստացվող դրամական միջոցների ապագա հոսքերի տատանման ռիսկն է արտարժույթի փոխարժեքների փոփոխության արդյունքում:

Ընկերությունը չունի արտարժույթներով արտահայտված էական ակտիվներ:

2015թ. և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի արժեզրկումը մյուս բոլոր արտարժույթների նկատմամբ կավելացներ սեփական կապիտալը ստորև ներկայացված գումարների չափով, ինչը պայմանավորված կլիներ Ընկերության կողմից կառավարվող ֆոնդերում ունեցած ներդրումների իրական արժեքի աճով (ծանոթագրություն 10): Այս վերլուծությունը հիմնված է արտարժույթների փոխարժեքների տատանումների վրա, որոնք Ընկերությունը դիտարկում է որպես հնարավոր հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Վերլուծությունը ենթադրում է, որ մյուս բոլոր փոփոխականները, մասնավորապես տոկոսադրույքները և բաժնետոմսերի գները՝ իրենց գնանշման արտարժույթով, կմնան անփոփոխ:

	2015թ. հազ. դրամ	2014թ. հազ. դրամ
ՀՀ դրամի 10% արժեզրկում	8,636	5,991

2015թ. և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ դրամի փոխարժեքի արժեզրկումը մյուս բոլոր արտարժույթների նկատմամբ կունենար գումարային առումով նույն՝ սակայն հակառակ ազդեցություն վերը նշված գումարների վրա՝ պայմանով, որ մյուս բոլոր փոփոխականները կմնան անփոփոխ:

(գ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պայմանագրային պարտականությունները: Ընկերությունը մշակել է քաղաքականություն և ընթացակարգեր պարտքային ռիսկը կառավարելու համար՝ ներդրումները վճարունակ բանկերում կատարելու նպատակով: Պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է ղեկավարության կողմից: Պարտքային ռիսկն առաջանում է բանկային հաշիվների մնացորդների գծով (ծանոթագրություններ 8 և 9) և ստացվելիք կոմիսիոն վճարների գծով (ծանոթագրություն 12):

(դ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Ընկերությունը կունենա դժվարություններ ֆինանսական պարտավորությունների հետ կապված պարտականությունները կատարելիս, որոնք մարվում են դրամական միջոցների կամ մեկ այլ ֆինանսական ակտիվի միջոցով: Ընկերության կողմից իրացվելիության ռիսկի կառավարման նպատակն է ցանկացած պահի ապահովել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ դրամական միջոցների հոսքերի հետ կապված պարտականությունները կատարելու համար: Իրացվելիության ռիսկի կառավարման քաղաքականությունն ուսումնասիրվում և հաստատվում է ղեկավարության կողմից:

15 Կապիտալի կառավարում

Ընկերության կապիտալի չափի պահանջները սահմանվում և վերահսկվում են ՀՀ ԿԲ-ի կողմից:

Ընկերությունը որպես կապիտալ սահմանում է տեղական օրենսդրությամբ կենսաթոշակային ֆոնդերի կառավարիչների համար որպես կապիտալ սահմանված հողվածները: Կապիտալի նկատմամբ գործող ՀՀ ԿԲ-ի ներկայիս պահանջների համաձայն՝ Ընկերության ընդհանուր կապիտալի նվազագույն չափը պետք է կազմի 500,000 հազար դրամ: 2015թ և 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության կապիտալի չափը համապատասխանում էր օրենսդրությամբ սահմանված պահանջներին:

Տարվա ընթացքում կապիտալի կառավարման նկատմամբ կիրառվող Ընկերության մոտեցումը չի փոփոխվել:

16 Պայմանական դեպքեր

(ա) Դատական վարույթներ

Դեկավարությունը տեղյակ չէ Ընկերության դեմ հարուցված փաստացի, ընթացքում գտնվող կամ սպառնացող հայցերի մասին:

(բ) Հարկային պարտավորվածություններ

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը շարունակում է զարգանալ և բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատավճիռների հաճախակի փոփոխություններով, որոնք հաճախ հստակ չեն, հակասական են և պահանջում են պարզաբանումներ տարբեր հարկային մարմինների կողմից: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության մի շարք մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն սահմանել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս փաստերը Հայաստանի Հանրապետությունում կարող են այլ երկրների համեմատությամբ էական հարկային ռիսկ առաջացնել: Ընկերության դեկավարությունը գտնում է, որ պատշաճ կերպով է գնահատել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրության իր մեկնաբանությունների, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են էական լինել այս ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

17 Գործարքներ կապակցված կողմերի հետ

(ա) Վերահսկողություն

Ընկերության մայր կազմակերպությունն է հանդիսանում Ամունդի Ասեթ Մենեջմենթ Էս-Էյ -ը (Ֆրանսիա): Ընկերության վերջնական մայր կազմակերպությունն է Կրեդիտ Ագրիկոլ Էս-Էյ-ը (Ֆրանսիա): Ընկերության մայր կազմակերպությունը և վերջնական մայր կազմակերպությունը ներկայացնում են հանրությանը հասանելի ֆինանսական հաշվետվություններ:

(բ) Գործարքներ առանցքային ղեկավար անձնակազմի հետ

Ստորև ներկայացված է 2015թ. և 2014թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարիների ընդհանուր վարձատրությունը, որը ներառված է «Աշխատակազմի գծով ծախսեր» հոդվածում:

	2015թ. հազ. դրամ	2014թ. հազ. դրամ
Աշխատակիցների վարձատրություն	135,764	140,540
Աշխատակազմի գծով այլ ծախսեր և հատուցումներ	14,214	8,911
	149,978	149,451

(գ) Գործարքներ այլ կապակցված կողմերի հետ

Ստորև ներկայացված են 2015թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այլ կապակցված կողմերի հետ իրականացված գործարքների մնացորդները և համապատասխան միջին արդյունավետ տոկոսադրույքները, ինչպես նաև 2015թ. շահույթում կամ վնասում այդ գործարքների գծով արտացոլված գումարները:

	Մայր կազմակերպություն		Նշանակալի ազդեցություն ունեցող կազմակերպություններ		Ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպություններ	
	հազ. դրամ	Տոկոսադրույք	հազ. դրամ	Տոկոսադրույք	հազ. դրամ	Տոկոսադրույք
ԱԿՏԻՎՆԵՐ						
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ						
- Ընթացիկ հաշիվներ	-	-	14,574	-	-	-
- Ժամկետային ավանդներ	-	-	81,382	12.1%	-	-
Պահանջներ բանկերի նկատմամբ	-	-	151,435	14.1%	-	-
Այլ ակտիվներ	24,413	-	-	-	-	-
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ						
Այլ պարտավորություններ	4,629	-	50	-	1,418	-
Շահույթ և վնաս						
Կումիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտ	96,430	-	-	-	-	-
Տոկոսային եկամուտ	-	-	28,828	-	-	-
Այլ ծախսեր	13,621	-	4,594	-	15,970	-

«ԱՍՈՒՆԴԻ-ԱԿԲԱ ԱՍԵԹ ՄԵՆԵՉՄԵՆԹ» ՓԲԸ
 2015թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա
 ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Ստորև ներկայացված են 2014թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այլ կապակցված կողմերի հետ իրականացված գործարքների մնացորդները և համապատասխան միջին արդյունավետ տոկոսադրույքները, ինչպես նաև 2014թ. շահույթում կամ վնասում այդ գործարքների գծով արտացոլված գումարները:

	Մաշր կազմակերպություն		Նշանակալի ազդեցություն ունեցող կազմակերպություններ		Ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպություններ	
	հազ. դրամ	Տոկոսադրույք	հազ. դրամ	Տոկոսադրույք	հազ. դրամ	Տոկոսադրույք
ԱԿՏԻՎՆԵՐ						
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ						
- Ընթացիկ հաշիվներ	-	-	42,521	-	-	-
- Ժամկետային ավանդներ	-	-	60,386	8.0%	-	-
Պահանջներ բանկերի նկատմամբ	-	-	204,338	11.3%	-	-
Այլ ակտիվներ	99,324	-	6	-	-	-
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ						
Այլ պարտավորություններ	2,601	-	606	-	9,637	-
Շահույթ և վնաս						
Կումիսիոն և այլ վճարների տեսքով եկամուտ	94,779	-	-	-	-	-
Տոկոսային եկամուտ	-	-	38,411	-	-	-
Այլ ծախսեր	2,601	-	4,918	-	11,202	-